

25 JUL 2010

551

Հ-94

ԳԻՒՆ Լ 20 ԿՈՂ.

«ԵՐԿՐԻ ՇՈՒՐՉԸ»

ԱՅՆ ԵԶՈՒՄ ՎԵՐԱԲԵՐԱԾ ՊԱՏԻՔ ՊՐԻՎԱԼ

ԽՈ-ԱՐԱՏԵԱ ԱՐԵՎԱՄ

ԳԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

անդրամակի եւ լուր

ՏԻԳՐԱՆ ԵԱԶՈՐՈՒԹՅՈՒՑ

15 Խուն. 1918 թ. Փառական

ՀՐԱՄՈՒՂԻՆ, ԵՐԿՐԱՅԱՐԺ

ԵԿ

Հ Ե Ց Զ Ե Ր

աշխարհագրական զրոյցներ

551

Հ-94

4T

11513

Hoppe - M. w. w. s. 10

~~ՀՐԱՄԱ~~ «ԵՐԿՐԻ ՃՈՒՐՁԸ»

79 աշխարհագրական պատկ. գրադարան

ԽՄԲ. ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆԻ


No 1.

## ՀՐԱԲՈՒԴԵՆ, ԵՐԿՐԱՅԱՔ

th

Σ Ε 3 9 6 0

## ԱՃԽԵՐՀԵՐԸԿԱՆ ԶՐՈՅՑՆԵՐ



ԷԼԵՔՏՐԱԿԱՐԴ ՏՄԱՆ ՕԲ. Ն. ԱՐԱՍԵԱՆԻ. ՊՈԼԻՏ. 7.  
1909

14.06.2013

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

«Երկրի շուրջը» բնդհանուր վերնագրի տակ մենք  
մտադիր ենք լոյս ընծայել աշխարհագրական զրոյց-  
ներ բովանդակող գրքոյների մի շարք:

Այդպիսի զրոյցների օգտաւէտութիւնը, իրու օ-  
ժանդակ միջոց աշխարհագրութեան դասաւանդման,  
կարծում ենք ակներև պիտի լինի ամեն մի դասա-  
տուի համար: Ուսուցիչները անշուշտ փորձով տեսած  
կլինեն, թէ ինչպէս դպրոցականները մեծ հետաքըռ-  
քրութեամբ են լսում իրենց առաջ կարդացւող աշ-  
խարհագրական զրոյցները. սրանց միջոցով պատկե-  
րացւում, դիւրութեամբ ըմբռնելի են դառնում աշ-  
խարհագրական զանազան գաղափարներ:

Ներկայ հրատարակութիւնը նպատակադրում  
է ընձեռել մի կողմից աշխարհագրութեան դասատուին  
այդ օժանդակ միջոցը, իսկ միւս կողմից տալ աշա-  
կերտական և ժողովրդական ընթերցանութեան համար  
կարդալու այնպիսի նիւթ, ուր հանդէս գայ մարդը իր  
դարաւոր աշխատութեամբ՝ բնութեան ոյժերը իրեն  
հպատակեցնելու և քաղաքակրթական առաջադիմու-  
թեան դործում:

Նիւթի ընտրութիւնը անելիս մենք պիտի ձգտենք  
տալու թէ մեր և թէ օտար հեղինակներից այն-  
պիսի հատւածներ, որոնք մի կողմից իրենց գիտական  
հանրամատչելի բովանդակութեան և միւս կողմից  
դիւրըմբռնելի ոճի շնորհիւ կարդացւեն և հաս-  
կացւեն հեշտութեամբ:

Մեր երկրին վերաբերող զրոյցներ մտադիր ենք  
հրատարակել առանձին:

1396-91

(179-90)

ՀՐԱԲՈՒԴՆԵՐ

1. Իտալիայում, ծովի ափին, Նեսապոլ քաղաքից 20 վերստ հեռու, գտնվում է մի հրաբուխային սար, որ կոչվում է Վեդուվ:

Մեզնից հազար ինը հարիւր տարի առաջ  
ոչ ոք չէր կարծում, թէ Վեզուվը հրաբղսային  
սար է։ Այդ սարի սառուսներում ընկած էին  
Պոմպէյ, Հերկուլանում և Ստամբիա ծաղկած  
քաղաքները, սարի լանջերի վրայ և նոյն իսկ  
խառնարանում տարածում էին խաղողի փառ-  
թամ այգիներ, զով ամառանոցներ, կանաչ ա-  
րօտներում արածում էին հօտեր։

Քրիստոսի ծննդից 63 տարի անց այդ սարը սկսեց անհանգստութեան նշաններ ցոյց տալ, —մերթ գետնի տակից լսում էին հարւածներ, և մերթ էլ սարի ճեղքւածքներից գոլորշի էր դուրս գալիս: Այդ թւականին երկրաշարժից կործանւեց Պոմպէյ քաղաքի մի մասը, բայց շուտով քաղաքը կրկին վերաշնուեց:

Անցաւ 16 տարի. 79 թւականին Վեգուվը զարթնեց քնից։ Տեղի ունեցան ստորերկրեայ գորեղ ցնցումներ, սարի գագաթին երևացին գորշու և մոխրի ամպեր։ Երկրի խորքից լսւեցին

ԳՂՐԴԻՒՆՆԵՐ. ԵՐԿՐԱՉԱՐԺ Եղաւ: ԾՈՎԸ այնչափ արագութեամբ ներս քաշւեց իր առաջւայ եղրից, որ ծովափում թափւած մնացին ծովային շատ կենդանիներ: Դրանից յետոյ անմիջապէս վեզուվի խառնարանից դուրս ժայթքեց մոխրի հսկայական ամպ, սիւնեղէն սկ ամպը սարից վեր բարձրացաւ, ապա սկսեց ցած իջնել, փռւեց և ծածկեց սարը, երկնքի երեսը: Զնայելով օրը մը: Անձրե, մոխրի և հսկայական քարել էին անդադար վիժում սարի խառնարանից և ապա թափւում երկրի վրայ:

2. Ահա թէ ինչպէս է նկարագրում այդ հրաբուխային ժայթքումը յայտնի հոռմայեցի Պլինիոս Կրտսերը, որ ականատես է եղել այդ բանին:

«Իմ հօրեղբայրը (յայտնի բնագէտ Պլինիոս Աւագը) նաւառորմի հրամանատարն էր և ապրում էր այդ ժամանակ ծովափում, վեզուվից 20 վերստ հեռու: Մի անգամ ծովում լողանալուց յետոյ նա պառկած հանգստանում էր անկողնում, երբ մայրս եկաւ ու ասաց նրան, թէ վեզուվ սարի կատարին երևաց անսովոր մեծութիւն և ձև ունեցող ամպ: Հօրեղբայրս իսկոյն վերկացաւ տեղից և գնաց դիտելու մօրս ասածը: Ամպը նմանում էր հսկայական մայրի ծառի՝ բարձր բնով և լայն տարածւած ճիւղերով: Նրա

գոյնը սպիտակ էր, տեղտեղ կեղառու բծերով: Շատ նշանակալից թւաց այդ ամպը հօրեղբորս, իբրև գիտնական մարդու, և նա հրամաքորս յեց պատրաստել մի թեթև նաւ, որ նրանով գնայ աւելի մօտենայ սարին ու դիտէ այնտեղից: Հենց նոր էր դուրս եկել նա տնից, երբ նամակ բերին իր բարեկամ Բասսից, որ ապրում էր վեզուվի ստորոտում: Բասսը խնդրում էր նրան՝ գալ և ազտեղ նրանց անասելի դժբախտութիւնից:

Հօրեղբայրս հրամայեց նաւերի առագաստները բաց թողնել և ուղղւեց ծովով դէպի վեները բաց թողնել և ուղղւեց ծովով դէպի վեպում: Սակայն ճանապարհորդութիւնը վտանգաւոր էր: Նաւերի վրայ մոխրի էր թափւում, առա և քանի նրանք աւելի էին առաջ գնում, այն աքան էլ մոխրը աւելի էր խտանում և տաքանում. մոխրի հետ թափւում էին նաև սկ, ճաքած սովորական քարեր և չեչտքարեր: Ծովի ճքւած առաջանաւում էր և տեղտեղ մակերեսոյ յատակը տատաննում էր և տեղտեղ մակերեսոյ վեր բարձրանում: Բայց Պլինիոսը շարունակում էր իր ճանապարհը:

Վերջապէս նա վեզուվի ծովափը հասաւ, գրկեց և սրտապնդեց երկիւղից դողդողացող իր բարեկամին և մերձաւորներին. ապա, որպէսզի էլ աւելի հանգստացնէ ամենքին, գնաց լողանալու, որից յետոյ և նա ուրախութախ ճաշեց: Մինչ այդ վեզուվի կատարին առաջացել էր


հրեղէն լոյս, որ վառ փայլում էր գիշերւայ մը-  
թութեան մէջ։ իրեն շրջապատողների ահը ցը-  
րելու նպատակով Պլինիոսը վստահացրեց ամեն-  
քին, որ իբր թէ հեռուում վառում են այն  
տները, որոնց տէրերը թողելփախել են:  
Յետոյ նա պառկեց քնելու։ Բայց մոխիրը և չե-  
չաքարերը թափւում էին աւելի ու աւելի ոյժով  
և մեծ քանակութեամբ։ Վերջապէս այն դուռը,  
որ տանում էր դէպի հօրեղբօրս սենեակը, այն-  
պէս ծածկւեց մոխրով, որ մի քիչ յետոյ արդէն  
անկարելի պիտի լինէր դուրս գալ սենեակից։  
ահա այդ ժամանակ արդէն զարթեցրին հօրեղ-  
բօրս, և նա վեր կացաւ տեղից։

Յաճախակի կրինւող ստորերկրեայ հարւած-  
ներից տները շարժւում էին և փուլ գալիս, սկ-  
սուալ գիշերը պատել էր ամեն ինչ, թէպէտ  
շրջակայ վայրերում հենց այդ միջոցին օրցե-  
րեկ էր։ Հօրեղբայրս իր բարեկամների և ծառա-  
ների հետ միասին, գնաց դէպի ծովափ։ Բարէ  
անձրկից պաշտպանւելու համար նրանք ծածկե-  
ցին իրենց գլխները բարձերով և թաշկինակնե-  
րով կապոտեցին։

Երբ ծովափ հասան, Պլինիոս գետնին փը-  
ռեց իր վերարկուն և պառկեց վրան, Բայց հենց  
այդ միջոցին օդի մէջ զգացւեցին խեղդող գա-  
զեր՝ այրուղ ծծումբի (քուքուրթ) հոտով։ Ա-  
մենքը իսկոյն փախան այդ տեղից։ հօրեղբայրս

էլ վեր կացաւ, բայց նա իսկոյն և եթ կըկին  
վայր ընկաւ և հոգին տւաւ»։

3. Ահա մի ուրիշ սարսափելի դէպք։  
Այն միջոցին, երբ վեզուվից հրաբուղիս ըս-



Նկ. 1. Հրաբուղիս.

կսեց ժայթքել, Պուպէյ քաղաքում ներկայացում  
կար կըկէսի (ցիրկ) մէջ։ Կըկէսը քաղաքի մէջ  
գտնուում, այլ նրանից մի փոքր հեռու։ Պոմ-  
չէր գտնուում, այլ նրանից մի փոքր հեռու։ Պոմ-  
չէր կըկէսը այնչափ մեծ էր, որ այնտեղ տե-

դաւորւել կարող էր քաղաքի բոլոր բնակիչների  
կէսից աւելին:

Այդ օրւայ ներկայացմանը եկել էին մի  
քանի հազար հոգի: Ոչ ոքի մտքովն էլ չէր  
անցնում, թէ հրաբուղիսը պիտի խանգարէ ներ-  
կայացումը: Բայց ինչ. հենց որ երկինքը մըթ-  
նեց, և կրկէսի պատերը տատանւել սկսեցին,  
այն ժամանակ ամենքն էլ սարսափով դուրս  
փախան: Մարդիկ ջարդում և կոխկրում  
էին իրար: Ո՞ւր քաղաք էր վազում իր ստաց-  
ւածքը ազատելու, ո՞րն էլ շտապում էր փախ-  
չել քաղաքից հեռու՝ իր կեանքը փրկելու համար:

Այդ միջոցին քաղաքում սարսափելի բա-  
ներ էին կատարում: Մթութեան մէջ մարդու  
արձանները և պատերի կարնիզները վայր էին  
թափւում, և նրանց կտորտանքները մարդիկ  
էին սպանում: Շատերը փողոցներում վայր էին-  
ընկնում, և նրանց ծածկում էր վերեկից թափ-  
ւող տաք մոխրը: Բազմաթիւ մարդիկ ողջ-ողջ  
և ազատեց իր կարողութիւնը:

Մի ականատես պատմում է. «Այն ժամա-  
նակ խաւար էր, կարծես գիշեր լինէր: Մթու-  
թեան մէջ լսում էր միայն կանանց ձիչը, ե-  
ղաղակը: Ո՞ւր իր հօրն էր կանչում, ո՞ւր իր

որդուն, ո՞րն էլ իր կնոջը, —իրար ձանաչել կա-  
րող էին նրանք ձայնից միայն: Մէկը իր գըժ-  
քաղդութիւնն էր սգում, ուրիշը՝ իր մերձա-  
ւորներին: Կային և այնպիսիները, որ աւելի  
սիրով մահ էին խնդրում: Նրանք օգնութեան  
մարդ էին խնդրում: Էլենց աստւածներին. շատերն էլ  
էին կանչում իրենց աստւածներ չկան, թէ չէ օգ-  
նութեան կհամնէին անմեղ մարդկանց»:

Ցանկարծ Պոմպէյ քաղաքից դուրս, մթու-  
թեան մէջ, կրակի լոյս երևաց. — դա լաւայի  
հեղեղն էր հոսում: Խաւարի մէջ լաւան կրակի  
հոման էր երևում: Բայց լաւան քաղաքի (Պոմ-  
պէյի) վրայով չանցաւ: Մի քիչ յետոյ քաղաքի  
պէտի սկսելի հեղեղ, որ առա-  
վրայ եկաւ կեղտի, ու ցեխի հեղեղ, որ առա-  
ջացել էր ջրի և մոխրի խառնուրդից: Նա լայն  
գետի նման վեցուվի լանջերից ցած էր հոսում:  
Այդ ցեխի հեղեղի ալիքները մի քանի բոպէում  
ծածկեցին քաղաքը և տակով արին ամեն ինչ,  
նոյնիսկ տաճարները և թատրոնը: Շատ մարդ  
ոչնչացաւ այդ միջոցին, քիչ բան կարողացան  
տներից ազատել:

Խաւարը տեսեց երեք օր. երբ կրկին լոյս  
եղաւ, արեգակը տխուր պատկեր ցոյց տւաւ.  
բոլորովին ոչնչացել էին Պոմպէյ, Հերկուլանում  
և Ստաբիա քաղաքները, կարծէք ամենեին գո-  
յութիւն ունեցած չլինէին: Նրանք ծածկեցին  
մոխրով և ցեխով, որ գոյանում էր մոխրի և

անձրկի խառնուրդից։ Այստեղ, ուր առաջ տարածւած էին ծաղկած քաղաքներ, տղմոտ ու ճահիճներ գոյացան, շուտով նրանք էլ չորացան ու պնդացան։

4. Մարդիկ կամաց-կամաց մոռացան, որ վեղուվի մօտ հողի տակ քաղաքներ կան թաղքաղաքները անյայտ մնացել էին գետնի տակ։ Հազար հինգ հարիւր տարուց աւելի այդ վերջը նրանք պատահմամբ միայն գտնւեցին։ Հարիւր և յիսուն տարի սրանից առաջ սկսեցին փորել այդ քաղաքների տեղը, պեղումներ կատարել այնտեղ։ Հողի տակից դուրս եկան տներ, տաճարներ, փողոցներ և խանութներ։ Մի փոան մէջ գտան չորացած հաց, որ թխւած էր հաշար ութ հարիւր տարուց աւելի առաջ։ Ուրիշ և ամեն տեսակ առարկաներ։ Մի տնակում իր բոլոր զէնք և զրահով։ Այդ զինուրը նոյն անել իր պարտականութիւնը, և զոհ էր գնացել։

Շատ թանկագին բաներ գտնւեցին Պոմպէյի պեղումների միջոցին, որոնք պահւում են այժմ Նէտապոլ քաղաքի թանգարանում։ Ամենից թանկագինն այն եղաւ, որ մարդիկ իմացան, թէ ութ հարիւր տարի առաջ։

Այս հին ժամանակներից սկսած մինչև օրս էլ վեղուվը չեն համարում հանգած հրաբուխային սար։ Երբեմն-երբեմն այդ սարից ժայթքում է գոլորշի, մոխիր և լաւայ։

Որչափ էլ սարսափելի է լինում վեղուվը հրաբուխային ժայթքման ժամանակ, բայց նէտապոլ քաղաքի բնակիչները սիրում են իրենց հրաբուխային սարը։ Նէտապոլի համարեա բոլոր նկարների վրայ էլ կայ նաև վեղուվը։ Սա կենակարների վրայ էլ կայ նաև վեղուվը։ Մա կերակրում է իտալացիներին նրանով, որ իր մօխրակրում է շրջակայքի դաշտերը, ըով պարարտացնում է արգաւանդ։ այդ տեսակ դաշտերում են տարածւած խաղողի և այլ մրգերի ամենալաւ այգիները։ Զուրը և օղը հետզհետէ ոչնչացնում են հին լաւան և նրանից առաջացն արգաւանդ հող։ Ահա թէ ինչու վեղուվի նում արգաւանդ հող։ Ահա թէ ինչու վեղուվի լանջերի վրայ այնչափ խիտ բնակութիւն կայ, թէպէտ շատ էլ անվտանգ չէ այնտեղ ապրելը։

\* \*


Եթէ հրաբուղիս երկար ժամանակ, դարեր շարունակ, չէ գործում, նա կոչւում է հանգած հրաբուղին։ Բայց դեռ հարց էլ է, թէ նա իսկապէս հանգած է, այլևս ամենեին չի գործեց։ Թէ քնած է միայն դարաւոր քնով և մի լու, թէ քնած է միայն դարաւոր քնով և մի ժամանակ կըկին պիտի սկսի իր սոսկալի գործը։ Մեր երկրում, Կովկասում, կան մի քանի

հանգած հրաբուղիներ. օրինակ՝ Մասիս սարը, Արագածը, Ելբրուսը և Կաղբէկը:

Հրաբուղին սարը իր ձևից կարելի է ճանաչել. նա լինում է կոնաձև, շաքարի գլխի նման, ինչպէս աւազի հսկայական թումբը, Սարի կատարը կտրած է լինում և փոս. դա կոչւում է խառնարան. այդտեղից էլ հրաբուղինը ժայթքում է:

## 2. ՊՈՄՊԵԻ ԱԼԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Իտալական ոչ մի միւզէ ինձ վրայ այնքան խորը, այնպէս անջնջելի տպաւորութիւն չթողեց, ինչպէս որ Նէապոլինը. Ամբողջ 4—5 ժամ մարդ այնտեղ թափառում է սենեակից սենեակ, կանգ է առնում բազմաթիւ հին որմանկարների առաջ, որոնք բերւած են աւերակ քաղաքներից և դարձեալ դուրս է գնում ափսոսանքի ու չյագեցած հետաքրքրութեան մի զօրեղ զգացմունքով: Պատկերների և առհասարակ այստեղ ի ցոյց դրւած առարկաների գեղեցկութիւնը չէ, և ոչ էլ նրանց պատճառած գեղարւեստական հաճոյքը, որ հմայում է մարդու այս անօրինակ միւզէում, այլ մի ուրիշ բան, մի ցնցող, մի յուղիչ բան: Երկու հազար տարի առաջ անցած մի կեանք իր ամենասովորական և ամենաբարձր արտայայտութիւնների մանրամասնութեամբ այս-



Հետ. 2. Պոմպեյի աւերակները.

տեղ փուլում է մարդու առաջ և այնպէս մտածել տալիս, շշմեցնում: Պոմպէյ և Հերկուլանումն են այստեղ, այն դժբաղդ քաղաքները, որոնք ամբողջ քան դարեր վեցուվի մոխրէ պատանով գետնի տակ մնալուց յետոյ վերջապէս լոյս աշխարհ եկան սարսափի լուռ պերճախօսութեամբ իրանց թշւառութիւնը, ինչպէս և իրանց անդարձ կերպով անցած երջանկութիւնը պատմելու յետագայ սերունդներին: Բոլորը, ինչ գտնւած է վատաբաղդ քաղաքների աւերակների մէջ, այստեղ է, ահա թէ ինչու հետաքրքիր է այս միւզէն, ուր մարդ ամբողջ ժամերով կարողանում է ապրել զարերի խաւարի մէջ թաղւած մի անցած կեանքով, նայում է և չէ կըշտանում, ինչպէս հրաշքով յանկարծ մի անձանօթ, քանտասատիկական երկիր ընկած:

Ամենից հետաքրքիրն այս միւզէում Պոմ-  
պէջի շինութիւնների պատերից հանւած որման-  
կարներն են, որոնք խնամքով շարւած են բազ-  
մաթիւ դահլիճներում. Պոմպէյացիք իրանց  
առանձին և հասարակական կեանքը, իրանց բա-  
րոյական և կրօնական հասկացողութիւնները  
ներկայացնող պատկերներով զարդարած են եղել  
իրանց բնակարանների պատերը. Ահա քաղաքի  
ընդհանուր տեսարանը, մի գեղեցիկ ընդհանուր  
որմանկար, որ քսան դարեր մոխրի տակ պահ-  
ել է ապշեցուցիչ մաքրութեամբ և բոլորովին

անեղծ։ Տները քառակուսի են, յունական ճաշակով շինուած և զարդարւած արձաններով։ Իրար վրայ տեղրամաներ կազմող հարթ կտուրներ, ուր հարաւի բնակիչները սիրում են գիշերներն անցկացնել, սիրուն փողոցներ, մերթ ուղղաձիգ ու լայն, սերթ գալարուն ու նեղ, փոքրիկ պարտէներ, ձեմելիներ հովաշատ ծառերով, քարէ գեղեցիկ կամուրջներ երկու կողմից քանդակագարդ ճաղաւոր ցանկով պատաժ, մի խօսքով զըզարդ ճաղաւոր ցանկով պատաժ, ուր ամեն բաւիչ, սիրուն հարաւային քաղաք, ուր ամեն ինչ վկայում է կիրթ ճաշակ, նըբացած պահանջներ, կեանքի հեշտութիւններ, որ այնպէս յատուկ են բոլոր ժամանակների բարձր քաղաքակրթութեանը։

Հետաքրքիր է Պոմպէյի շուկան. ահա բազ-  
մաթիւ վաճառողներ և գնողներ. այս մէկը, որ  
ածեռքից կախել է զգեստներ և միւսը՝ որ  
կարկութիւն է սկսել, նրանք երեք դեռ չեն  
համաձայնել և ձեռքով համոզիչ շարժումներ  
են անում մտազբաղ դէմքերով։ Ահա մի ուրիշը,  
որ նստել է իր պաշարեղէնի առաջ սպասելով  
յաճախորդների. ահա մի հայր, մի ձեռքից կա-  
խել է մի զամբիւղ և միւսով բռնել է իր փոք-  
րիկ երեխայի աջը, եկել է շուկայ պաշարեղէն  
գնելու. ինքը գործի մարդ է, տուն վերադաս-  
նալու չէ մինչև ճաշ. մինչև երեկոյ, երեկի երե-  
խան պիտի տանի մօրը յանձնելու այդ օրւայ

պաշարը։ Այսքանով չէ վերջանում շուկայի կեանոս, հրապարակն ընդարձակ է և նրա ամեն կողմադում իր առօրեայ հոգսերով պաշարւած մի ամբոխ է եռում։

Այստեղ է հացագործի խանութը, համարեա  
այնպէս, ինչպէս լինում է այսօր։ Առջևի տախ-  
տակի վրայ գարսւած են կոլոր հացեր, խորքում  
երեսում է բոցավառ հնոցը, իսկ զնողները, շար-  
ւած փողոցում, սպասում են իրանց հերթին։

Ամենից ուշագրաւը այս դպրոցն է, ուր  
իշխում է ծեծի մեթօդը. խստասիրտ ուսուցիչը  
կանգնած է իշխանական դիրքով. նրա առաջ  
մի երեխայ շալակել է միւսին—երկի մի ծոյլ,  
կամ յանցաւոր աշակերտի—և երրորդը դալար  
ճիպոտով հարւածում է երկրորդին, որ ցաւից  
ոտները ցնցում է վերև ներքեւ և ի հարկէ մի  
պինդ էլ ձչում։ Այստեղ են երկու նկարիչ կա-  
նայք իրանց արւեստի պարագաներով։ Աւելի  
հեռուն մի ջահիլ ու գեղեցիկ կին, սիրատանջ  
ու թշուառ, որ տխուը նստել է մի անկիւնում  
և լուռ սպում։

Բաղմաթիւ են նաև կենդանիների և բոյ-  
սերի պատկերներ. մի աքաղաղ, մի հատ ծառ,  
սողուններ, գաղաններ. Անցնում եմ երկրորդ  
բաժինը, ուր զետեղւած են կործանւած քաղաք-  
ներից հանւած կահ կարասիններ և զարդեր. ի-  
րար յաջորդող մի շարք մեծամեծ դահլիճներ,

ուր սեղանների վրայ ապակիների տակ շարւած  
են բազմաթիւ զէնքեր, զարդեր, թանկագին մե-  
տաղներից գեղեցիկ ապարանջաններ, մեռեակ-  
ներ, մատանիներ, ականջօղեր, մեծ մասը գե-  
ղարւեստական սիրուն և հետաքրքիր գործեր,  
վրաները քանդակւած բոյսեր ու կենդանակեր-  
պեր: Ահա մի ամբողջ խոհանոց, իր բոլոր պա-  
րագաներով, երկաթէ օջաղ, ունելիք, մետաղէ  
ամաններ, քամիչներ, գդալներ. ահա ննջարանի  
սարքը, սեղանատունն իր բոլոր յարմարութիւն-  
ներով: Մի դահլիճում ապակիների տակ ի ցոյց  
են դրւած պաշարեղէնի մնացորդներ, ցորեն,  
ընկոյզ, լօբի, հացեր, ձուեր և այլն, ամենքն էլ  
քարացած և սև, ինչպէս ածուխը, բայց տակա-  
ւին պահում են իրանց ձեր մինչև ամենափոքը  
մանրամասնութիւնները: Երեսում են պտուղների  
վրայ նուրբ գծերը, նրանց խորդուբորդը, հացի  
վրայ դեռ նշմարւում են թխող ձեռքի հետքերը.  
մի պարան կայ, մի սև քարացած պարան, որ  
կարծես քիչ առաջ միայն ոլորւել է:

Այս բոլորը այնքան հետաքրքիր է, այն աստիճան տպաւորիչ, որ մարդ անտարբերութեամբ զանց է առնում միւզեի նոր գեղարվեստական բաժինը, որ բաւական հարուստ է աշքի ընկնող նկարներով ու արձաններով և իր բոլոր ժամանակը նւիրում է կործանւած քաղաքների յիշատակներին, նրանց պատմութեանը։ Այս այցե-

լութիւնից յետոյ Պոմպէյը իր շրջակայքով, իր աւերակներով ամբողջապէս բռնում է իմ ուշնու միտքը և ես շտապում եմ ժամ առաջ ճանապարհ ընկնել տեսնելու Վեզուվը և նրա ոտների տակ յաւիտենականապէս մեռած, անկենդան քաղաքները:


Վեզուվի ստորոտումն եմ: Երկու հազար տարի առաջ այստեղ մի շին ու բազմամարդ քաղաք էր փռւած, եռուն կեանքով, անսանձ վայելքներով, ճակատագիրն ու բնութիւնը հաւասարապէս հեգնող մարդկանց մի բազմութիւն: Եւ այդ քաղաքն այլևս չկայ. նրա տեղ բարձրանում են այժմ կանաչ բլուրներ, որոնք իրանց գեղեցիկ արտաքինի տակ թագցնում են անցեալից այնքան մարդկային վշտեր և ներկայումս այնպիսի անորոշ սարսափ, որ վրաները քայլելն անզամ դժւար է. սրանք Պոմպէյի աւերակներն ու մոխրակոյտերն են: Դժբաղդ քաղաքի մի փոքր մասը միայն բացւած է, ուր աւերակները, գերեզմաններից դուրս քաշւած կը ժախքների պէս, իրանց խոռոչներով նայում են երկնքին և կարծես հարցնում են՝ «ինչո՞ւ»:

Վեզուվի այդ յայտնի հրաբխային ժայթքումը տեղի ունեցաւ 79 թ. Ք. յ.: Հոռմայեցի երկու նշանաւոր հեղինակների՝ Պլինիոս ա-

ւագ և Պլինիոս Կրտսերի անունները կապւած են Վեզուվի հետ: Առաջինն իր ժամանակին յայտնի բնագէտ, հեղինակ մի ժԲնական պատմութեան», զոհ գնաց Վուլկանին (հրաբուղին), իսկ երկրորդը՝ առաջինի եղբօրորդին, զբականագէտ, նկարագրեց այդ զարհութելի բնական երկոյթը: «Սեպտեմբերի 9-ին էր, ասում էր Պլինիոս Կրտսերը, մօտ ժամը 7-ին անսովոր մեծութեամբ և տարօրինակ ձևով մի ամայ բարձրացաւ հորիզոնի վրայ, տիեզերքը կարծես իր տեսքը փոխեց, երկիրը ծածկւեց մոխրի մի հաստ շերտով, ինչպէս ձիւնա: Ահա այդ մոխրին էր, որ անձրեսից ցեխ դարձաւ և իր տակ թաղեց ամեն ինչ: Միայն XVII-րդ դարի վերջերին Պոմպէյի հետեւը գտնեց և ՀՀ 43-ին առաջին անգամ սկսեցին փորւածքներ կատարել, փողոցները մաքրել և աւերակները լոյս աշխարհ հանել: Մինչև այժմ բացւած է քաղաքի մօտ 2/5 մասը և ահա այս բացւած մասն է, որ ամեն օր հարիւրաւոր հետաքրքիրներ գնում են այցելելու: Երկու ֆրանկ գնարով ճանապարհորդին ընկերանում է մի պաշտօնական առաջնորդ պէտք եղած բացատրութիւնները տալու և մանածելու համար: Նախ այցելում ենք մի փոքրիկ միւզէ (թանգարան), ուր զետեղւած են աւերակներից դուրս համած առարկաներ: Այստեղ մի երկար դաշտի ձում բարձր սեղանների

7/11-1922

2



վրայ շարւած են մարդկանց քարացած դիակներ մինոյն դիրքերով, որով նրանք գտնւած են աւերակների մէջ։ Մարմինը մնացել է ամբողջ, ինչպէս ծածկել է մօխիթը, իր յետին մանրամասնութիւններով։ մէկի վրայ նկատում է նոյն իսկ հոռմէական տոնը։ Երկու հազար տարի յետոյ անգամ գֆւար է առանց խորին ցաւի նայել այդ կարծր զանգուածների վրա, որոնք մի ժամանակ կենդանի մարդկի են եղել։ Թէև կարծում է, որ հրաբուխային մեծ ժայթքումների ժամանակ կենդանիները թունաւոր գազերով խեղդւում են լաւայի և մօխիթի թափւելուց առաջ, բայց և այնպէս համարեա աներկբայ է, որ այս խեղճերը մեռել են սովորի տանջանքների մէջ։ Ոմանք երեսի վրայ ընկած՝ ասես դեռ գալարւում են ցաւից, թաղելով երեսները մօխիրների մէջ, որ չը տեսնեն բնութեան անասելի արհաւերը, կրակի մըրիկը։ ուրիշները մէջքի վրայ են ընկած և իրանց քարացած մատների եղունգներով ասես դեռ չանգուում, բզկտում են կրծքերը, դէմքերի վրայ անասելի սարսափը յափտեան կնքւած։ Այս մէկը ցաւով բռնել է իր կողքը, կարծես շարունակում է մոնչալ ցաւից։ միւսն իր փորն է սղմում, երեսի մեղմելու համար սպանիչ գալարները։ ահա մի կին, որ յղութեան վերջին ամսում քար է կտրել արդանդի երեխայի հետ։ այդ մարմինը, քարէ անշունչ

այդ զանգւածը այժմ էլ անախարժ է նայել։ Մի շուն կայ, մի խեղճ, փոքրիկ շուն, որ կծիկ կծիկ է գարձել ցաւից գալարւում է իր պոչի վրայ, կրծոտում է իր թաթերը, իր սեփական միսը։ Ամբողջ պատկերը չափազանց յուզիչ է։ գժւար է անտարբեր նայել մարդկային այս թէկուզ քարացած տանջանքին ու թշւառութեանը, որ գարերի միջից անցել է և մեզ հասել կարծես ասելու համար, թէ գիտէք արդեօք մոռացութեան և խաւարի մէջ քանի քանի միլիոններ են լալիս, կակծում, շունչեր փչում՝ կուրծքը պատող տանջանքների մէջ, այնպէս որ յաջորդ սերունդները կը կասկածեն անգամ նրանց գոյութեան մասին։ Ծանր զգացմունքով հեռանում ենք միւզէից, թողնելով այնտեղ քար կտրած մարդկանց իրանց քար վշտերի հետ։

Այժմ թափառում ենք Պոմպէյի աւերակներում։ Փողոցները բոլորն էլ ուղղահայեաց են ու նեղ, ինչպէս լինում են խտալական հին քաղաքների փողոցները և ամենքն էլ պատած կոկ սալայատակով։ Մաշւած սալերի վրայ դեռ պարզ երեսում են անիւների հետքերը։ ինչպէս այժմ, փողոցների երկու կողմերում շարւած են տները և խանութները, բոլորն էլ մի յարկանի։ Խանութների ճակատին քարի վրայ փորագրւած դեռ երեսում է որ և է նշան, առևտուրի կամ պարապմունքի տեսակը։ ինչպէս երկում է ա-

Ժամանակ խանութների ցուցանակները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ խորհրդանշաններ, այսպէս, դեղատան պատի վրայ երեսում է մի մեծ գալարուն օձ, քանդակագործը մի սիրուն մողայիկ ունի դռան ճակատին, նշաններ ունեն հացավաճառը, գինեվաճառը:

Մի քանի փողոցներում դեռ մնում են քարէ աւազանները զարդարւած որ և է այլաբանական արձանով։ Այդ աւազաններից իւրաքանչիւրն իր առանձին անունն ունի, որով կոչում է նաև այն փողոցը, ուր գտնւում է աւազանը։ Մի քանի փողոցներում դեռ երեսում են ջրատար խողովակները արոյրից, որոնցով քաղաքին ջուր է մատակարարւել և աների փոքրիկ պարտէզները ջրւել։ Առանձին ուշադրութիւն է գրաւում հացավաճառի փուռը, որը ճիշտ այնպէս է, ինչպէս այսօր. տարբերութիւնը այն է, որ այժմ հացթուխն իր ալիւրը ստանում է հեռուից, իսկ այն ժամանակ ցորենն աղացել են հենց փոփ մօտ, երկու մասսիւ, կարծը քարեր իրար վրայ են հագցրած շարժական ձևով և վերինի կատարի բացւածքից ցորենը լցւել է երկուսի արանքը. ստրուկնեղին են անասունների պէս դարձրել բարձրի քարը հատիկներն աղալու համար։ Այժմ էլ այնտեղ են այդ սարսափելի քարերը և այնպէս ծանր կերպով իրար վրայ նըստած,

որ մի մարդ հազիւ է կարողանում մի փոքր շարժել. որքան դառնութիւն, որքան մարդկային քրտինք է արժեցել իւրաքանչիւր հացը։ Հաւատացնում են, որ այս հացթուխի մօտ գտնւել է մօտ 80 քարացած հաց—որոնցից մի քանիսը ես տեսայ միւզէում—և մի փոքրիկ խոզ փոփ մէջ։ Գինեվաճառի խանութի շրջապատից հանւել են մեծ թւով թրծած հողէ կարասներ, որոնք մօտաւորապէս մեր երկրի կարասների ձեւն ունեն։

Մասնաւոր տները, տնգամ պատրիցիաներինը (ազնւականներինը), խիստ փոքր են, անպատճառ քառակուսի և հարթ կտուրներով։ Հին հոռմայեցիք, ինչպէս և յոյները առհասարակ տներում երկար չէին մնում, նրանք օրւայ մեծ մասը անց էին կացնում դրսում, հրապարակներում, հասարակական վայրերում, թատրոններում, կրկէսներում և բաղանիսներում։

Հին աշխարհի մարդը աւելի մայր քաղաքի անդամ էր, քան ընտանիքի, նա աւելի քաղաքին էր պատկանում, քան իր տանը։ Եւ հասարակական շինութիւնները իրանց գեղեցկութեամբ, փառահեղութեամբ ու մեծութեամբ դեռ այսօր էլ զարմանք են շարժում։ Դասական աշխարհի փառքը, ինչպէս և գեղեցկութիւնը կազմել են ոչ թէ մասնաւոր շինութիւնները, այլ միմիայն թատրոնները, տաճարները, Փօրու-

մը, դատարանները և այլն։ Պոմպէյում ևս այդ շէնքերն առաջին տեղն են բռնում և նրանց այժմեան չնչին մոացորդներով անդամ կարելի է գաղափար կազմել անցեալ փայլի և մեծութեան մասին։

Աւերակների մէջ մեր պտոյտը տեսում է ժամեր. ապա դուրս ենք գնում, տանելով մեզ հետ այս տարօրինակ աւերակներից այնքան յիշութիւններ, այնքան տպաւորութիւններ։ Դուրս գալով, ես ակամայ հայեացք եմ ձգում աւերակների գլխին բարձրացած այս վեզուի վրայ, որ անհոգ ու անտարբեր դէպի իր ոտների տակ փուած աւերածը, շարունակում է քուլայ քուլայ ծուխ արձակել։ Աւերիչ և մահաբեր լեռը հեռու չէ և ես վճռում եմ անպատճառ բարձրանալ նրա կատարը, մօտիկից տեսնել նրա ահաւոր կրատերը, և եթէ հնարաւոր է մի քանի վայրկեան ապրել նրա տարերային գժութիւնների, նրա խօլ ուժերի աշխարհում, այն ծխի ամպերի մէջ։ Ինձ հաւատացնում են, որ ժամանակը յարմար է. վերեւը մնում է յաջորդ օրւան։

### 3. ԴէՊի վեջուիվ

Մի խումբ ճանապարհորդների ընկերակցութեամբ այսօր վեզուվի կատարը բարձրանալու եմ գնում հրաբուղիս դիտելու համար։ Վաղ

Այս առաւօտ վեզու վի կապոյտ մասսան ծրագրում է պարզ հորիզոնի վրայ, ամպերի մի հատիկ կարաւան պտոյտներ է գործում նրա կատարի շուրջը, որտեղից քուլայ-քուլայ բարձրացող ծուխն այսօր աւելի թանձր է և աւելի առատ։ Մեզ հաւատացնում են, որ կրատերն (հրաբուղիսի խառնարանը, բերանը) այսօր շատ հետաքրքիր պիտի լինի, որովհետեւ գործում շատ անսովոր եղանակով։ Մենք շտապում ենք։

Արդէն քայլում ենք վեզուվի փէշերի վրայ՝ լաւայով պատած գառիվայր ճանապարհով։ Ոս վուլկանի (հրաբուղիսի) թագաւորութիւնն է։ Հազվույթ լաւայի կարմիր զանգվածի ւագիւտ բոյսերը լաւայի կարմիր զանգվածի լումէջ կողած են, մուրացկանի խեղճութիւնն ունեն և կարծես թողութիւն են հայցում խստասիրա բնութիւնից, որ համարձակւել են աճել այստեղ։ Մեր ձիերը քայլում են մի նեղ փոշոտ արահետով, որի երկու կողմում, ինչպէս ցանկապատ, շարւած են լաւայի անձեւ, այլանդակ կապատ, շարւած են լաւայի անձեւ, այլանդակ կտորներ։ Զանազան ժամանակներում տեղի ունեցած հրաբուղային ժայթքումը ցած է մղել լաւայի ահազին հոսանքներ, որոնք իրանց աւերիչ ընթացքում կեանքերը լիզելով իշել են դէպի հարթակայրը և այս ու այստեղ սառել են, մասցել։ Վեզուվի ստորոտն այսպիսով դարերի ընթացքում վերածել է մի սկ հրաբուղային ծովի, ուր ալիքները իրանց բոցուտ թափի մէջ զանա-

զան ձեերով սառել են և քար կտրել ընդ միշտ:  
Ստորոտները կամաց կամաց աւելի զառի-  
վայր են դառնում և մեր ծիերն աւելի և աւելի  
դժւարութեամբ են բարձրանում:

Ահա լերան այն մասը, որտեղից զառիվայրը  
դառնում է համարեա ուղղաձիգ։ Թողնում ենք  
ձիերն այստեղ ստորոտում, մի մի երկայն լեռ-  
նային ձեռնափայտ ենք վերցնում և սկսում  
վեր ենել։ Արահետ չկայ և ոչ էլ կեռմաններ  
(օձապտոյտ ուղի), քայլում ենք հոսանուտ աւա-  
զի մէջ, բարձրանում ենք ծայրահեղ դժւարու-  
թեամբ, ամեն երկու քայլից յետոյ մի քայլ  
յետ ենք ընկնում, երբեմն ծնկների վրայ գալիս  
թանձր աւազաի մէջ, որի մէջ թաղւած են մեր  
սրունքները և այսպէս անվերջ։ Լերան վրայ՝  
այստեղ, այնտեղ մի քարի վրայ, մի թմբի ծայ-  
րին երկում են խտալացներ. նրանք մէկ-մէկ,  
երկ-երկու նստած, կամ ծոյլ ծոյլ պառկած,  
ծխում են անընդհատ։ Ճանապարհորդներին  
տեսնելով՝ նրանցից մի քանի հոգի շտապով  
ցած են սողում աւազի վրայով, հասնում են  
մեղ և առաջարկում են պարաններ, որոնցից  
մենք պիտի կախւենք, իսկ տէրերը մեզ պիտի  
քաշեն ու այսպէս բարձրանանք։ Շանը ու ա-  
նախորժ մի առաջարկութիւն թէ մեզ համար  
և թէ իրանց. աւելի լաւ է սողալով բարձրա-  
նալ, քան թէ օգտւել այդպիսի ծառայութիւ-

Նից: Հրաժարում ենք և շարունակում դժոխային վերելքը, մերթ ընկնելով, մերթ բարձրանալով թանձր ու հոսող աւազի մէջ:

Երբեմն երբեմն լսում է ահագին որոտ,  
որից ամբողջ լեռը թնդում է և նրա հետ միա-  
սին մեր գլխի վերև ծխի ոլորտը բարձրանում  
է, հա բարձրանում։ Քանի վեր ենք ելնում,  
այնքան աւելի են տաքանում քարերն ու աւա-  
զը մեր ոտների տակ։ Ճեղքւածքներ կան, որ-  
տեղից տաք գոլորշի է փչում, ճեռք մօտեցնել  
չի լինում։ Կատարին մօտիկ գոլորշի շնչող այդ  
բացւածքներն այնքան շատանում են, որ  
լեռը հազար բերանով մի հրէշի նման կարծես  
նստած հեռում է։

Մի ժամից աւելի է, որ քայլում ենք։ Հաս-  
նում ենք վերջապէս այստեղ, որից բարձր, գէ-  
պի կրտերը զնալ չէ կարելի առանց պետու-  
թեան կարգած և տեղին ծանօթ առաջնորդների,  
որոնք թւով մօտ քառասուն, կատարի շուրջը  
շղթայ են կազմել։ Նրանց ծառայութիւնից օգ-  
տւելու համար պէտք է վճարել մարդագլուխ  
չորս ֆրանկ \*): Կատարում ենք և այդ պահան-  
ջը։ Այժմ մեր առջեն է իսկական կատարը, ծը-  
ծումբով պատած և գոլորշի չնչող մի հսկայա-  
կան կօնուա, որ կարծես արւեստական ձեռվ է  
դրւած լերան մէջքին։ Եյտեղ վերելքն աւելի

\* ) 1  $\Phi_P = 37$  kPa.

Աս է դժւար է, զառիվայըը համարեա ուղաձիգ է պատի պէս Մեր վարձած առաջնորդները մը նում են ներքեմ, իսկ Մեզ ընկերանում է մի պաշտօնական առաջնորդ դէպի կատարը. Մարդը հաւատացնում է, թէ յաւ օր ենք Եկել, որովհետն կը արտուինը գործում է անհամբը ոյժով: Քայլում ենք ծծմբի միջից, խոնաւ ու տաք հողի մէջ թաղւած մինչև սրունքներս: Տաք գոյլում ամպը մեր ոտների ներքառ մեր գլուխ այլանդակուրէն պատասխնու է անում, երբեմն մեզ իսպառ ծածկում, ծծմամբահուսով մեր քը թերը լցնելով և երեք մի քամու շնչով ցրիւ է զալիս հնոանում: Որոտմունքն այստեղ զառնում է խացուցիչ, ասես հարիւրաւը թնդանօթներ են արձակում մեզանից մօտիկ, մեր ոտների տակ լիով գործում է ահազին դորդիւնը, այդ ձայնը մեզ և վախեցնում է և զրաւում: Մենք շտապում ենք:

**Ահա և կը ատերը** (Կարուղիի բերանը, խառնարանը): Ստորերկրեայ մի անսրսոյթ ոյշ մի խելագար մօմենտում (Վայրկանում), կը կայական զառացանքի մի օրում, մի զարհուրելի օրում, որի յըշատակը կորել է զարերի մէջ անհետ, երկունքի խօսկան թափով դէպի վեր է շարտել լերան թարող, կատարը, և սրա տեղի բացի լուսաներ, մի այս ամենը մերթիչներ, եռուն կաթսաներ, ճարճատիւն, շտուշիւն, շաշիւն, զրոդիւն, և այս ամենը մերթիրար խանուած, միաժամանակ, մերթիրար ետեսից, բարձր ու ցածր, մերթիրու, մերթիրունը կերպով դժուարում են, վեր բարձրանում արգանդից դէպի կատարը, ապա կը կին խորտակում և գնում անդունդները:

**Եղբեմ քամին վհում է դիպի մեզ ծծումը իր սուր հոտով լցնում է մեր աշխերն ու ուսնկները: մի վայրկեան կորչում ենք ամպերի մէջ, հազում ենք սաստիկ: ապա ինեղորդ ամպին անցնում է քամու թափով: և դարձեալ երկիւղով կոշցած, աշքերս չուած վայր ենք սայում, որտեղից լուռում են ծայները: Ոչինչ**

չէ երկում։ Մութ է այստեղ։ ծխի ու գոլորշու ամպերը հազար ու մի այլանդակ, հրէշաւոր ձևերով, ինչպէս մի անասելի մըրիկով մղւած՝ պտոյտներ են գործում այդ խաւարի տարածութեան մէջ, անդունդների վրայ, դիպչում են պատերին, տեղ են փնտոռում փախչելու, երկուքում ապաստան փնտոելու, կարծես սոսկում են իրանցից ներքև կատարւածից։ Սակայն ամպերը փախչել, ազատւել չեն կարողանում, իրանց ճիւղերի մէջ գալարւում, ոլորւում են հազար ու մի ձևերով և շարունակում են ծածկել այդ անդունդի բերանը, որի տակ, խորքից, շատ խորքից, մեր ռտների տակ, լսում է մի խուլ դրնդիւն։ լեռը դողում է, տնքում է ցաւով. ստորերկրեայ հարւածներն ահագին են. խկ մենք բոնւած ենք սոսկումով։

Այդ աղմուկից, գոռում-գոչումից, ստորերկրեայ որուամունքից շատ աւելի ճնշող, սասանեցուցիչ է երբեմն վրայ հասնող լուսթիւնը. դա տեսում է միայն մի փայրկեան, որի ընթացքում մարդ շունչը բոնած, բերանաբաց ամբողջապէս լսողութիւն դարձած՝ սպասում է, թէ ինչ մի աներեակայելի բան, մի ոչնչացնող ուրոտմունք պիտի լսէ, և սկսում է... յանկարծիրար ետևից այնպիսի ձայներ, այնպիսի դղրձին, որ ծնկները ծալւում են, դողում, և մարդ ջնջւած ու եթերացած կորչում է՝ չը

դիտես ուր։ Փոսի անթափանցիկ խաւարն էլ աւելի սաստկացնում է անդունդների սարսափը. զգում ես, որ այստեղ, այն մութ ու ալեկոծքօղի տակ կատարւում է մի աննկարագրելի, մի անասելի բան, որ տարերքը աւերածի և ոչնչութեան այդ խօլական երգով խօսում է մի անյայտ ու զարհուրելի բանից. նայում ես իմանալու համար, թէ ինչն է եռում, ճչում, ոռնում, լալիս այդ դժոխքում. նայում ես, ոչինչ չես տեսնում, և միայն խաւարն է տակին ու վրայ լինում, նրա ու ծալքերն են փուռմ առաջդ և հոգիդ պատում անորոշ երկիւղի խեղդող զգացմունքով։

Քամին սաստկացաւ. նրա մի ուժեղ պտոյտը, չգիտես ինչպէս, կատարից նես ընկաւ այն ահագին բացւածքի մէջ, ուր կատարւում է բնութեան ոյժերի պայքարը, նրա աւերիչ խենդութիւնը։ Քամին իրար խառնեց այդ ահագին սկաւառակի մէջ խաւարի ծոցում գալարւող ամպերը, որոնք աւելի կատաղաբար ու արագութեամբ սկսեցին սաւառնել անդունդների վրայ, ձայներն ու որոտը դարձան աննկարագրելի և յանկարծ, կարծես կապանքներից ազատւած՝ դուրս թռան այդ դժոխքից. լացան դէպի լայնարձակ կապուտակը.՝ ամբողջ սկաւառակը բացւեց մեր առաջ։ Այժմ տեսարանը վեհօրէն ահուելի է. մենք տեսնում ենք նրա խոնաւ, լպրծուն և

ծծումբի բաց շերտով ծածկւած պատերը. բոլորովին ներքես, խորութեան մէջ, երեսում են երկու ահագին հրաբխային բերաններ, որպէս երկու վառւած հսկայական թոնիրներ։ Ստորերկրեայ մի հրային մրրիկ է խաղում այնտեղ, և նրա թափով բոցերը մեծամեծ խուրձերով դուրս են ձգւում բարձր, բարձր և թանձր ծխի ոլորների հետ խառնւած. իսկ նրանց հետ միասին շիկացած, կրակ կտրած մեծ ու փոքր քարեր ձգւում են շեշտակի թափով, ուղղահայեաց դէպի վեր, վզվզում են, շվշում, շաշում են՝ ինչպէս փոթորիկի առաջ հեծող ծառեր, և ապա պտոյտներ գործելով ընկնում են կամ բացւածքի շրթներին, կամ հենց նոյն անցքի մէջ, որտեղից մի վայրկեան առաջ դուրս ընկան։ Բայց անդունդներում գործող փոթորիկը նրանց այնտեղ հանգիստ չէ տալիս, կրկին դուրս է շըպրտում նոյն թափով, նոյն որոտով, նոյն ուղղութեամբ, այսպէս անվերջ։

—Քարերը մեր գլխին ընկնել չեն կարող, հարցնում ենք մեր առաջնորդին։

—Ոչ, պատասխանում է նա, քամին հակառակ կողմն է փշում։

Բաւական անհասկանալի պատասխան, կամ խիստ վտանգաւոր կացութիւն, եթէ միայն մեր ապահովութիւնը կախւած է միայն քամու ուղղութիւնից, որի փոփոխւելը վայրկեանի գործ է։

—Այստեղ կրատերի մէջ անցեալ տարի մի անգլիացի երիտասարդ ընկաւ, շարունակում է առաջնորդը. բայց նա կռացել էր աւելի լաւ տեսնելու համար. կարծիք կայ նոյն-իսկ, որ քար է ընկել գլխին և գլորւել է անդունդները. բայց այժմ, հաւատացնում եմ ձեզ, պարսներ, ոչ մի վաս...»

Մենք էլ չենք լսում առաջնորդին. կատաղի որոտն ու բոցերը վերսկսում են. քարերը քըռ-ֆուում են մեր գլխից բարձր, լեռը դղրդում է, քամին սաստկանում է, և կարծէք հողը փախչում է մեր ոտների տակից, ամենքս էլ շփոթւած ենք։

Ես տեսել եմ հոենոսի ջրվէժը իր վրփուրների դէզերով, իր անկման վեհութեան մէջ, իր ալիքների անասելի մռունչով, իր բազմացան աղմուկով, որից մարդու հոգին է դոգում։ Ես տեսել եմ լայնարձակ ծովը փոթորկի ժամին, երբ ալիքները ամենի նժոյգների պէս իրար վրայ ծառանալով՝ մռմռացող բլուրներ են կազմել, որոնց վրայ ահագին նաւը տարու բերւել, խաղացել է տաշեղի պէս։ Ես տեսել եմ վարարած գետը իր աւերի և կատաղութեան բոլոր սարսափով ու վեհութեամբ։ Բայց այս բոլորը ոչինչ են վեցուվի կրատերի առաջ, նրա մոքնչոցի, նրա դղրդիւնի առաջ։ Նրա գործած տըպաւորութիւնը նման ոչինչ չունի աշխարհում։

Բնութեան այս խաղը, այն բռցերի, այս քարերի, ծիրի զարմանալի ժիրով դուրս է մարդկան երեակայութիւնից, և մեր լեզուն երբէք, երբէք չը պիտի կարողանայ արտայայտել այս ինչ զգում է մարդի այդ սաստնեցուցիչ պահակերի առաջ, այդ խացուցիչ որոշի տակ, ինչ պէս արտայայտեմ զգացածս։ Այսնոդ, այս բարձրում կանգնած, այս որսամունքի և ցնցումների մէջ թւում է, թէ մարդ չխեսնած փոսթորկի ժամին կանգնել է ճայթող ամպերի, շամթի և կայծակիների վրայ, խանճել է նրանց եւտ, տարւում է նրանց թափով, ինքն էլ մի մասն է երկնային, մրցի, Ակներեւ և ներկայ վանդի հանգիա մի կողմից մարդու մէջ ապրելու պահանջը մեծանում է անառելի շափերով և միւս կողմից սարսափի հաճոյքը բննում է աիրտը, և այս երկու զգացմունքները հրէշաւոր չափին հասած բալիսում են իրար, հոգին փոթողելում։ Նա ուզում է և փափշել և մասլյաւիսեան իր տեղում մեխւած, ներքեւում եռացող անդունդին երկար նայելիս մարդ դուզում է և միւսնայ ժամանդին պահանջ զգում վայր նետել այստեղ, այդ կրակէ մրցի ոլորտների մէջ, կատաղած տարերքին խառնելու վարծես իր մասն է, իր համար է ոռում այն դժոխքում։ Եւ այդ ժամանակ, առանց ինքն իրան հաջիւ տալու, կալչում է իր

հարևանի կողքին, բռնում է նրա ձեռքը և ըուլոր ուժով սղմում է, կարծես ոսկորները փշտելու համար։ Գերագոյն վտանգի առաջ ինքնապաշտպանութեան բնագդից դրդւած ապրել ուզող կենդանին ձգւում է դէպի իր նմանը և օգնութիւն հայցում։

Ասում են, որ երկիւղի և մանաւանդ անորոշ ու խորհրդաւոր երկիւղի աղբիւրը տվիտութիւնն է. անյայտն ու խաւարը սարսափի մայրն են. այդ ճիշտ է, բայց այստեղի հրաբխալին այս լեռան զժութիւնների առաջ, մարդկային բանականութիւնն ու գիտութիւնը պատճառում են, զլուխը դադարում է գործելուց թշնչ փոյթ, եթէ գիտես, որ երկրի արգանդում գործող ոյժներն են այս բոլորի պատճառը. գրանով սարսափը մազի չափ չէ թուլանում, մարդ-կենդանին շարունակում է դողալ իր կեանքի համար, շարունակում է օրօր եկանչութեան և մահի երագներում։ Այս որոտմաների, ճայթիւնների, դղբեղիւնների և բոցերի առաջ, այս ոռնացող անդունդի ափին մարդ այնքան փոքրանում է իր կանգնած տեղում, որ կարելի է առել թէ ոչընշանում, մոխիր է գառնում։ Այստեղ մարդ զգում է թէ ինքը մինչև մը աստիճան չնշին է ստեղծագործութեան մեծ պրօցէսի մէջ զգում է, որ բնութեան, նրա թագնւած անսանձ ոյժերի առաջ ինքն մի ողորմելի հիւլէ է իր բոլոր

յաւակնում բանականութեամբ, իշխելու, տիրապեսնելու, ընկճելու իր յարատե ու յամառ տենչով։

Նոյն նեղ, վտանգաւոր շաւդով պատոյտ ենք գործում կրատերի շուրջը, ցած ենք գալիս մի տեսակ շշկած, անորոշ վիճակի մէջ։ Մեզանից ոք չէ խօսում։ տպաւորութիւններ չեն հաղորդում, իրար եւ չենք նայում. իւրաքանչիւրն ապրում է իր առանձին աշխարհում, կարծես ոչ ոք ուշի չէ եկել կրած խորին հագեկան ցնցումներից, իջնելը հեղա է, սահում ենք աւագների վրայով, իսկ մեզանից վեր, մեր ետակում Վեցուվը շարունակում է անքալ, դղբրդալ, շարունակում է քրերել իր արդանդը դարերի երկունքով։

#### 4. ՍՈՍԿՈՒԻ ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐ

1. Այն տեղերում, ուր կան հրաբխային սարեր, միշտ էլ անպակաս է երկրաշարժը։ Հրաբխային ժայթքման ժամանակ երկրը միշտ դողում, շարժւում է, մէկ բարձրանում, մէկ ցածրանում, կարծեք տակից մի հակայ ձեռքում է ի մեր գրաւենեակի հաշիւները։ Յանկարծ լուեց զարծուրելի ճայթիւն։ Ես իսկոյն գուրա եկայ, անման նաև միա անվտանգ հասայ մեր բակը, որտեղ հաւաքւած էր կարծէք ամբողջ քաղաքի աղբարնակութիւնը։

35  
ըութիւնը — ճնշում է վերից, իսկ ներքեւց ջանք է թափում գուրս պրծնելու մի ուրիշ ոյժ դա էլ ստորերկրեայ կրակն է։

Բայց պատահում է երկրաշարժ նաև այնպիսի երկրներում, ուր հրաբխային սար ամենեւին չկայ։

Ոմենասոսկալի, չափագանց աղետաբեր երկրաշարժ է տեղի ունեցել 1755 թւականի նոյեմբերի 1-ին Եւրոպայի Պորտոգալիա թագաւորութեան (Պիրինէեան թերակղզու վրայ) մայրաքաղաքում, Լիսարունում։

Ահա թէ ինչ է պատմում այդ սոսկալի դեպքի մասին մի գրասենեակի ծառայող իր գործատիրոջը գրած նամակում։

«Վայրկենապէս աեղի ունեցաւ դժբախտութիւնը։ Սյդ օրը առաւօտեան շատ վաղ էի մեր կացել ես և տանը ստուգում էի մեր գրաւենեակի հաշիւները։ Յանկարծ լուեց զարծուրելի ճայթիւն։ Ես իսկոյն գուրա եկայ, անման նաև միա անվտանգ հասայ մեր բակը, որտեղ հաւաքւած էր կարծէք ամբողջ քաղաքի աղբարնակութիւնը։

«Տէ՛ Ամենակարող ինչ արժապիներ տեսայ եւս Գետինը մի կանգունի չափ կամ բարձրանում էր, կամ կրկին ցած իջնում. աները կործանւում էին սոսկալի ճայթիւնով։ Մեզնից

վեր գտնուող վանքը ուժգնօրէն տատանում էր մի կողմից միւս կողմը և ամեն ըռպէ վըտանգ սպառնում, որ փուլ կգայ և տակով կանի մեզ։ Սարսափում էինք մենք հենց գետնից, թէ՝ ահա, ահա կճեղբւի և կուլ կտայ նա ամենքիս կենդանի-կենդանի։

«Արեգակը մուայլել էր, երկիրը մթնել. մարդիկ չէին տեսնում իրար։ Ութ ըռպէից աւելի տեսեց գետնի այս զարհուրելի տարութերումը։ Ազա ամեն ինչ հանգստացաւ. սակայն կարձատե։ Միայն գիշերային սպիտակեղէն հագած՝ անմիջապէս դէպի մեծ հրապարակը վագեցինք, որ մեզնից հեռու չէր գտնուում։ Մենք շտապ-շտապ քայլում, վազում էինք խորտակւած տների միջով և դիակների վրայով. ինքները արդէն հեռու չէինք աղէտի ենթարկելուց։

Սյդ հրապարակում, ուր անց կացրինք մենք մօտ երեք սպանիչ ժամ, հաւաքւած էին չորս հազար հոգուց աւելի մարդիկ, —ումանք մենակ սպիտակեղէնով, շատերն էլ բոլորովին մերկ։ Ամենքը գունատ էին, դիակնացած. շտաբը ծանը վէրքեր էին ստացել։ Նրանք ազօթք էին մըմնջում առ Աստւած, որ գթայ, խղճայ իրենց. սուգ ու շիւան էր լսում ամեն կողմ։

«Եւ տես, երկիրը յանկարծ կըկին դղրդաց ու շարժւեց։ Տատանումը դարձեալ տեսեց մօտ ութ

ըռպէ։ Դրանից յետոյ մի ամբողջ ժամ դադար եղաւ. Բայց հենց այդ միջոցին էլ լուր տաւ սպառնում, թէ ծովի ջուրը սոսկալի կերպով բարձրածւեց, թէ ծովի ջուրը սոսկալի կերպով բարձրացել է, և թէ՝ կկորչենք շուտով, եթէ մեր գըլ-բացել է, և թէ՝ կկորչենք շուտով։

«Մեծ ու փոքր, կին ու տղամարդ, հարիւրաւոր մարդիկ էին հաւաքւել ամուր, հրաշալի ծովափում՝ մազապուրծ եղածները այնտեղիրենց կեանքը փրկելու էին շտապել. խեղճերը կարծում էին, թէ տպահով կլինեն այնտեղ. բայց այդ գըլ-էին, թէ ապահով կլինեն բարձրացաւ. սակայն կախախական ալիքները եկան սրբեցին ու ծովը տարան նետեցին։ Ծովը դուրս եկաւ ափերից իսկոյն. ծովափը, մի քանի հարիւր քայլ տարածութեամբ, չորացաւ, բայց իսկոյն էլի ծածկւեց ջրով. տասը սաժէն բարձրութեամբ ալիքներ էին խփում. ոչ ոք չպրծաւ։

«Բոլոր փողոցների առաջը բռնել էին խորտակւած տների աւերակները։ Մենք քայլում, միանցնում էինք քարակոյտերի և դիակների վրայով, սոսկալի վտանգի մատնելով մեզ։ Քառորդ ժամ անց՝ անփորձ հասանք ընդարձակ դաշտը։

«Առաջին գիշերը օթևանեցինք բաց երկընքի տակ, համարեա բոլորովին մերկ, —միանգամայն զուրկ բոլոր անհրաժեշտ բաներից։ Մեր ունեցածը միայն մի վրան էր, որ մեզ մի փոքր պաշտամում էր գոնէ ձմեռւայ ցրտից և անձապահապանում էր գոնէ ձմեռւայ ցրտից արևից (Պորտուգալիայում մեր երկը ցըտերը ա-

մենքին չեն լինում. ձմեռը նոյն իսկ ձիւն չէ գաւթիս): Գիշերւայ ժամը 11-ին զանազան կողմերում կրակ երևաց. հրդեհ էր ընկել այս ու այն տեղ: Ինչ որ ինտայել էր երկրաշարժը, հրդեհը լավեց այս:

«Մեր մաքսատումը, որտեղ միլիոնների ապրանք կար, բերւած աշխարհի չորս կողմից, — այն էլ մասամբ հրդեհեց և մասամբ ծովին կուլ գընաց ահազին հրապարակի հետ միասին: Նաւահանգստում կանգնած երեք հարիւրից աւելի նաև երից շատերը խարսխից ելան. մի քանիսը ջրառոյզ եղան, ջատերն էլ մեծապէս վնասւեցին: Մի հոլանգական նաև էր դուրս նետւել ընկել քաղաքի մէջ և կանգնել ցամաքում. բայց ահմ մի ռորիշ զօրեղ ալիք եկաւ, գրկեց նաև և կրկին ծովը տարաւ, առանց վնաս հասցնելուն սրան: Մինչ անգամ քաղաքից 60 մղոն հեռաւորութեան վրայ գտնուզ նաւերը, որ գալիս էին զանազան երկրներից, սարսափի ենթարկեցին. շատ եմ գարմանում, թէ իսկապէս նրանք ինչպէս ազատւեցին: Երջակայքի սարերը տատանւեցին. շատերի գագաթները ճեղքւեցին և ահազին սարաժայուր ցած գլուխեցին դէպի ձորերը:

«Մեծ, հրաշալի քաղաքը՝ իր քաղմաթիւ, 500,000 բնակիչներով՝ այժմ դարձել է մի քարակոյտ. Աւերակների տակ թաղւող հազարաւոր աղետեալները գնուր տեղն էին աղաղակում, օգ-

նութիւն աղերսում, — նրանց լսող չկար. ողջող թաղւեցին նրանք աւերակների տակ, կամ ամենակուլ հրդեհին զոհ գնացինս Ո՞հ, Աստւածիմ. դժբախտութիւնը, աղէտը անչափ է, անսահման. թող ամենքի մէջ զարթնէ կարեկցութիւն: Ում սիրտը չեն շարժի այս սարսափները, նա քրիտանեայ չէ, նա—մարդ չէ:

«Տէր, խնայիր այս խեղճ երկրին, ճար արա անծայր թշւառութեանց:

Լիսաբոնի երկրաշարժից վեց րոպէում 60,000 մարդ ռչնչացաւ:

Այդ երկրաշարժը զգացւեց նաև շատ ու շատ հեռու երկրներում: Լիսաբոնից մի քանի հարիւր վերստ հեռու, Մարոկկոյում (Աֆրիկա), մի ծաղկած, մեծ գիւղ կար: Ութից մինչև տասը հազար բնակիչ ունէր այդ գիւղը: Հենց նոյն օրը, երբ երկրաշարժ եղաւ Լիսաբոնում, այդ գիւղի գետինը պատռւեց և կուլ տւաւ գիւղը, ապա գետինը եկաւ ծածկեց գիւղը: Բոլոր բնակիչներն էլ թաղւեցին ճեղքւածքում: Այդ նոյն երկրաշարժից Աֆրիկայի մի քանի քաղաքներ էլ մեծ մասով կործանվեցին:

Նոյն երկրաշարժը զգացւեց Եւրոպայի շատ երկրներում: մի քանի տեղ լճերի ջուրը ցած եկաւ: ուրիշ տեղեր, ընդհակառակը, բարձրացաւ մակերևոյթից: շատ տեղ լինոները պատռւեցին և միջից նոր աղբիւրները բղիւլ սկսեցին:

Ծովի և ցամաքի շարժումը այդ միջոցին հասաւ նոյն իսկ մինչև Հիւսիսային Ամերիկա: Մի խօսքով՝ այդ երկրաշարժը տարածւեց ամ-



նկ. 3. Երկրաշարժից առաջացած ձեղքւածք

բողջ Եւրոպայից չորս անգամ աւելի մեծ տարածութեան վրայ:

2. Մեզնից 22 տարի առաջ, 1887 թւականին, մեծ երկրաշարժ եղաւ նաև Ասիական Ռուսաստանի Վերնի քաղաքում, որ գտնւում է Տեան-Շան լեռների ստորատում:

Ահա թէ ինչ է պատմում մի ականատես.

«— Մայիսի 26-ի առաւօտեան շատ վաղ, ժամի 5-ին, ինձ քնից յանկարծակի գարթեցրեց ստորերկրեայ մի դղրդիւն, որ թնդանօթի ձայն ունէր: Վայրկենապէս վեր թռայ ես անկողնից: Բայց հենց այդ միջոցին գետինը ուժգին տատանւեց և ամեն կողմից լսւեց խլա-

ցուցիչ ճայթիւն և գոռոց: Տների պատերը տատանւեցին և վերից-վար ձեղքւածքներ ստացան. առաստաղները կռացան և նստեցին:

«Միմիայն սպիտակեղէն հագիս՝ ես փողոց վազեցի, դժւարութեամբ միայն կարողանալով բաց անել ուժգին տատանւող գուռը: Փողոցում մարդ չկար: Ստորերկրեայ դղրդիւնը հայ շարունակում էր, աները ձեղքեր էին ստանում, կործանում: Սարսափահար՝ ես սպասում էի, թէ ահա իսկոյն ոտքիս տակ գետինը կը ձեղքի և կուլ կտայ ինձ:

«Թիչ յետոյ խմբերով մարդիկ էին վազվզում գէպի փողոց: Շատերը հենց տնից գուրս գալիս վայր թափւող աղիւսների տակ տեղն ու տեղը մնացին: Օգնութեան աղաղակներ էին լուսում, աւերակների տակ մնացածների հառաչանքները, այս ու այն կողմ փախչող, գլուխը կորցրած անասունների վայրենի բառանչը: Սակայն անողորմ, անխնայ երկրաշարժը չէ դադրում:

«Առաջին ստորերկրեայ տատանման հետեւցին նաև երկրորդը, երրորդը: Բոլոր տները և եկեղեցիները աւերակ դարձան: Ամեն մի քայլափոխում մարդ ականատես էր յուղիչ, ցնցող տեսարանի: Ահա, այստեղ աւերակի տակ մնաց մի կին, իր համարեա բոլոր երեխաներին ազատելուց յետոյ.—Նա ինքն իրեն նետել էր տա-

տանւող տան ներսը՝ փրկելու այնտեղ մնացած էր վերջին երեխային, բայց այդ բոպէին վայր ընկաւ ահագին գերանը և նրա ոտքը ճմլեց. նա զնոր տեղը օգնութիւն էր աղերսում: Տես, ահա այստեղ ընկած է հենց այժմ քարով սպանւած մի մարդու դիակ: Բայց ես անկարող եմ արտայացնել այն բոլորը, ինչ տեսայ այս առաւ օտ վերնիի փողոցներումք...

Սկզբում կարծեցին, թէ աւերւել են բոլոր աները: Իսկապէս քարաշէն բոլոր տները աւ ւերւեցին, իսկ փայտաշէն տների մեծ մասը չմնաւեց. քանդացին նրանց վառարանները և խողովակները միայն: Ութ հազար հոգի գոհ գնացին այդ երկրաշարժին, որ բացի մարդկային զոհերից, այնքան դժբախտութիւն բերեց քաղաքին և շրջակայ երկրին. մինչև օրս էլ հազ դիւնազ է բուժում ժողովուրդը այդ ցաւից:

Դեռ վեցնի քաղաքի երկրաշարժը զօրեդ տեսակից չէր:

3.—Մի ուրիշ երկրաշարժ, որ տեղի է ունեցել 1692 թւականին Ծամայլա կղզու վրայ (Ամերիկայում), կրկին շատ զոհեր տարաւ: Գետինը մերթ ճեղքում էր և մերթ կրկին ծածկում. շատ մարդ գլուխեց այդ ճեղքածքները. ոմանք ճեղքածքի մէջ մնացին մինչև մէջքը: Երկրը ճմլեց նրանց և սպանեց. շատերն էր ճեղքածքի մէջ մնացին մինչև վիզները, միայն

գլխներն էին հողից գուրս մնացել... Շատ շէնքեր ծովը նետւեցին: Դեռ երկրաշարժից յետոյ էլ, բաւական ժամանակ, ծովի մէջ երևում էին այնտեղ թաղւած տների ծխնելոյզները, իսկ նրանց կողքին՝ ջրասոյզ եղած նաւերի կայմերը: Կատաղի ալիքները մի մեծ նաւ հանեցին ծովից և քշեցին նաւը գէպի մօտակայ կտուրները, որտեղ և մնաց նա, վլցնելով տակի շէնքերը...

4. Սոսկալի երկրաշարժ եղաւ հարաւային Բատակացում անցած 1908 թւականի դեկտեմբերի 28-ին: Երկրաշարժը սկսւեց առաւօտեան վաղ, ժամը 5<sup>1</sup>/<sub>2</sub>-ին: Մարդկային զոհերով և ուրիշ մասներով այս երկրաշարժը (Սիցիլիայում և Կալաբրիայում) անցկացաւ նոյնիսկ Լիսաբոնի երկրաշարժից: Կործանւեցին մի քանի ծաղկած, շէն քաղաքներ իրենց շրջականերով—Մեսսինան, Պալերմոն, և այլն: 115,000 հոգի զոհ գնացին այդ երկրաշարժին, բազմահազար ժաղովուրդ էլ մնաց սղակիր, անտուն և անինչք:

## 5. Խւջիշ եւ Առաջ ԳԱԼԻՍ ԵՐԿՐՈՇԱՐ- ԺԸ ԵՒ ՀՐԱԲՈՒՂԵԸ

Նախ ինչից է լինում երկրաշարժը:  
Ծովի վամ ցամաքի ջուրը ահագին քանա-

կութեամբ անդաւար ծծւում է երկրի մէջ։ Գետա-նի տակ ջուրը աշխատում է իր համար ճա-նապարհ բաց անել։ Տեղ-տեղ նա կրկին դուրս է գալիս երկրի երեսը իբրև աղբիւր։ Բայց շատ տեղ էլ ջուրը մնում է երկրի ներսում։

Ստորերկրեայ ջուրը ողողում է երկրի տա-կի շերտերը և գրանից էլ առաջ են գալիս այնտեղ զանազան անցքեր և մեծամեծ խոռոչ-ներ։ Այդպիսի խոռոչի մէջ ընկնել կարող է եր-բեմն ոչ միայն մի ամբողջ գիւղ (ինչպէս Մա-րոկկոյում Լիսաբոնի երկրաշարժի ժամանակ), այյ երբեմն նաև մի ամբողջ քաղաք։

Այնպիսի խոռոչներ կամ այրեր կան, ուր հեշտ մտնել կարելի է երկրի մակերևոյթից։ Կան այ-րեր էլ, որ տասնեակ վերստերով երկայնու-թիւն և 40 սաժէնից էլ աւելի բարձրութիւն ունեն։

Ստորերկրեայ ջրից գոյանում են այնտեղ գետեր և լճեր։ Ջուրը հողը փորում խոռոչ է դարձնում ոչ միայն երկրի երեսին, այլ և եր-կրի ներսում։ Դրանից առաջացած խոռոչները և այրերը երբեմն այնշափ լայն և ընդարձակ են լինում։ Որ նրանց կամարը ծածկը, չէ կա-րող պահել այն ծանրութիւնները, որ ճնշու-է նրանց վերից։ Եւ պատահում է, որ մի այդ-պիսի ստորերկրեայ խոռոչի կամ այրի առաս-տաղը փուլ է գալիս։ Դրանից էլ ահա վերևում,

երկրի մակերևոյթի վրայ, գգացւում է երկրա-շարժ։

Բայց այդպիսի վլումներից շատ մեծ եր-կրաշարժ չի լինում։ Ամենասոսկալի երկրաշարժ-ները լինում են ահա թէ ինչից։

Երկրագնդի վերևի մասը սառն է. Նա իր տաքութիւնը ստանում է արեգակից, իսկ երկրի խորքը թափանցել չեն կարող արեկի ճա-ռագայթներ։ բայց և այնպէս, այնտեղ տաքու-թիւն կայ. Քանի աւելի խորը երթանք, այն-չափ էլ աւելի կշատանայ տաքութիւնը։ Շատ հանքահորերում այնքան մեծ է տաքութիւնը, որ նրա ձեռքից բանւորները այնտեղ աշխատել չեն կարող. տաքութիւնը մինչեւ 40 և աւելի աստիճանի է հասնում այնտեղ, ուր ամենամուր կազմւածք ունեցող մարդը հազիւ մի քանի բո-պէ դիմանալ կարողանայ։ Եթէ մի եր-կու վերստաչափ խորը, երկրի ներսում, այդչափ տաքութիւն կայ, ապա ուրեմն, ինչպէս հաշ-ւում են գիտնականները, երկրագնդի բոլորովին ներսում, կերպոնում, տաքութիւնը մօա 16,000 աստիճանի կհասնի։ Այդչափ տաքութեան մէջ ոչ մի բան դիմանալ չէ կարող, ամեն ինչ այն-տեղ ոչ միայն պիտի այրւի, այրւելուց էլ հոսի, — այլ նոյնիսկ պիտի եռ գայ և գոլորշի դառնայ։ (Երկրի մակերևոյթի վրայ ջուրը եռ է գալիս 100 աստիճան տաքութեան մէջ)։

Այսպէս՝ երկրի խորքը շատ տաք է, կրակ։ Այդ դրութեան մէջ է եղել երկրագունդը ամբողջապէս միլիոնաւոր տարիներ առաջ, ինչպէս այժմ արեգակն է։ Բայց հետզհետէ, ժամանակի ընթացքում, երկրի ներսը մնալով կրակն ակսել է սառչել երեսից և կազմել երկրի շերտերը, —ինչպէս որ օրինակ մի հսկայական կրակի դէզ երեսից կամաց-կամաց սառչում է, իսկ ներսը դեռ կրակ է։

Երկրի սառչելը դեռ շարունակում է նաև մեր օրերում։ Սառած շերտերը մենք կոչում ենք երկրի կեղեւ։ իսկ ներսը, կրակը, կոչում ենք միջուկ։ ինչպէս օրինակ՝ ձմերուկը, ինձորը, կազինը և այն ունեն կեղեւու միջուկ։

Դուք գիտէք անցուշտ ամեն մի առարկայ որ տաքանում է, այդ տաքութիւնից նա լայնանում է։ այդպէս էլ ամեն մի առարկայ, որ սառչում է, նա կուչ է գալիս, սեղմւում։ նմանապէս՝ երկիրը հետզհետէ սառչելով կուչ է գալիս, սեղմւում։ Երկրի արտաքին կեղեւը, որ աւելի հաստ է, աւելի էլ դանդաղ է սեղմւում, քան ներսի մասը։ Կուչ գալուց երկրի կեղեւը մի քանի տեղ բարձրանում է վեր, —այնտեղ առաջ են գալիս լեռներ։ իսկ ուրիշ տեղեր նա ցած է իջնում, նստում, —դրանից էլ առաջ են գալիս հովիտներ, օրինակ վերցնենք ինձոր կամ ձմերուկ։ սրանք էլ ունեն կեղեւ և միջուկ։ ձմե-

րուկը որ արեի տակ դնենք, նրա կեղեւը կուչ կգայ, վրան տեղ-աեղ փոսեր կգոյանան, կաշին կը նստի, տեղ-աեղ էլ նա կբարձրանայ։

Երկրի սառչելը տեղի է ունենում շատ դանդաղ։ Բայց յաճախ այդ միջոցին երկրի կեղեւը ճարճատում է, ահազին շերտերը միանգամբ շարժում են իրենց տեղից, նստում։ Ահա դրանից էլ առաջ է գալիս զօրեղ երկրաշարժ։

Վերջապէս, երկրաշարժ լինում է նաև հետեւալ պատճառից։

Մենք արդէն տեսանք, որ երկրի խորքում կը կայ։ գիտենք նաև, որ երկրի երեսից շատ ջուր է ծծւում դէպի ներս։ Զուրը յաճախ խոռոչների և զանազան անցքերի միջով ծծւում հասնում է այնպիսի խորութեան, որտեղ ջուրը տաքութիւնից գոլորշի է դառնում։ Իսկ գոլորշու ոյժը, հօ ամենքդ գիտէք, որ մեծ է։ Կաթսայի կամ սամօվարի մէջ եռացող ջուրը, գոլորշիանալով, ոյժ է ստանում և շարժում իր խուփը։ Շոգեկառքի մէջ եղած քիչ գոլորշին կարողանում է երկաթուղու շատ վագոններից բաղկացած գնացքը քաշել, հազարաւոր փութապլանք և բազմաթիւ ճանապարհորդներ տանել, —այն էլ նրապէս արագ։ այդ ևս գոլորշու ոյժն է անում։

Եթէ մի փոքր գոլորշին ահազին ծանրութիւններ է շարժում, հապա ինչ կլինի ստորերկրեայ լճերից և գետերից, եթէ նրանց ջուրը

երկրի խորքի տաքութեանը հասնի՝ որչափ գուլորշի կգոյանայ դրանից, ի՞նչ ոյժ կունենայ նա և ինչպիսի հսկայական ոյժով կճշշէ այդ գոլորշին թէ ջուրը և թէ ցամաքը։ Նա կարող է շարժել ցամաքը, հեղուկ դարձած լաւան երկրի ճեղքերից դուրս քշել կարող է դէպի հրաբուխային սարի խառնարանը։ Հեղուկ լաւայի հետ, բնական է, գոլորշին ինքն էլ երկրի խորքերից լուսաշխարհ դուրս կժայթքէ։

Ահա թէ ինչու հրաբուխային ժայթքումների ժամանակ լեռան խառնարանից դուրս են գալիս ոչ միայն լաւայ, մոխիր և քարի կտորներ, այլ նաև՝ ջրի գոլորշի։ Ծանր լաւան ինքն իրեն անկարող է սարի խորքից վեր ժայթքել, եթէ նրան գոլորշին ցածից վեր չհրէ։ Որպէսզի կարելի լինի դուրս քշել—բարձրացնել լաւան, հարկաւոր է շատ գոլորշի։ Ինչոց դրա համար էլ հրաբուղիների ժամանակ շատ գոլորշի է բարձրանում, նա խառնարանից սեան նման վեր է ենում դէպի երկինք։ այստեղից, անձրև դարձած, երկիր է թափւում, հոսում ահագին գետի նման, ու տակովանում գիւղեր և քաղաքներ։

Կնշանակի, ուրեմն, հրաբուխային ժայթքում առաջ գալու համար հարկաւոր է որ լինի նաև ջուր։ Դրանից է, որ հրաբուխային սարերը մեծ մասով գտնուում են կղղիների վրայ և ծովափե-

ԵՒԱ:

Զուրը անընդհատ կռիւ է մղում ստորեր կրեայ տաքութեան դէմ՝ երկրի խորքում։ Երբ յաղթում, աւելի ուժեղ է լինում ջուրը, այդ դէպում լաւան վեր է բարձրանում, տեղի է ունենում հրաբուղի։

Հրաբուխային սարեր կան երկրագնդի զանազան մասերում (300-ից աւելի)։ Կնշանակէ՝ երկրի զանազան մասերի խորքում էլ տաքութիւն կայ։

Իսկ երբ ջուրը չէ յաղթում, այդ դէպում նրա և ստորերկրեայ տաքութեան մէջ տեղի ունեցող կռիւ մասին մարդիկ նմանում են ստորերկրեայ ցնցումներից, տատանումներից։— Տեղի է ունենում երկրաշարժ։

Ցաւիտեան շարունակում է կռիւը ստորերկրեայ տաքութեան և ջրի մէջ։

Իսկ թէ որն է նրանցից աւելի ուժեղ, — այդ ոչ ոք չգիտէ։

## 6. Հ Ե Յ Զ Ե Ր

Հիւսիսային Ամերիկայում ենք, նորդիւերեան լեռներում։

Արագ սլանում է երկաթուղու գնացքը գարնուրելի անդունդների եղբով, ամենի կիրճերի միջով։ Կանաչաւէտ հարթավայրեր, ձիւնապատ լեռներ, ժայռերի կատարներ, կատա-

դի և հոսանուտ գետակներ ու, այդ բոլորից վեր՝ կապոյտ, պայծառ երկինքը:

### Զքնաղ տեսարաններ:

Դուք համսում էք վերջին կայարան: Նըստում էք հանրակառք (դիլիժանս): Չորս յոգնած ձիեր դանդաղօրէն քարշ են տալիս կառը սարնիվեր ուղին: տեղ-տեղ անյատակ անդունդների եղերքով է զնում: Թւում է, թէ մէկ անդգոյշ քայլ ևս,—և դուք ամենի վիճը կդուրը մէք...

Բայց ահա վերջապէս և «Աղքային» (կամ ժողովրդական) պարկը—աշխարհի ամենազարմանալի հրաշալիքներից մէկը:

Պարկը մտնելիս ամենքի աչքին է ընկնում մի փայտաշէն գեղեցիկ տուն. դա «Աղքային» հիւրանոցն է: Այդ հիւրանոցի շուրջը գետինը ամբողջապէս ծածկւած է ամենանուրը կրաքարի փոշով. կարծէք ձեան սփոռոց տարածած լինեն այդտեղ:

Ճանապարհը կինվեր է բարձրանում. լսում է կրաքարի գետնից առաջացող բարձրածայն դոփիւնը ձիերի: Ծուրջը տարածւում է մայրի ծառերի, եղենիների և տերևաւոր ծառերի խէժից տռապջացող պնուզահոտութիւնը: Անտառը լի է բազմատեսակ, զոյնզգոյն թռչնակներով: Աւելի հետում տարածւում են զմրուխտի նման կանաչ լճերը, որոնց մէջ լողում են բիւրտառ

վայրի բաղեր, սագեր և ջրային ուրիշ թռչուններ:

Բայց ահա վերջացաւ ճանապարհը: Դուք գտնում էք Գիլրոնի գետահովտում: Ամբողջ հովիտը պատած է թանձր ամպերով և գոլորշուխտ քուլաներով: Եւ ձեզ պաշարում է այն միտքը, թէ դուք ընկել էք մի գործարանային հակայական քաղաք, որ ամբողջապէս պատած է հնոցներից բարձրացող ծխով:

Բայց ոչ Այդտեղ քաղաք չկայ, ձեր շուրջը շած են հազարաւոր աղբեւրներ և շատրւաններ, ուրոնցից եռացող ջուր, իսկ դրանից էլ գոլորշու ամպ է բարձրանում: Ամբողջ գետինը կարծէք զրահապատած լինի շլացուցիչ սպիտակութիւն ունեցող կայծքարի (չափմախի քարի): Կաստ շերտով:

Անթիւ անհամար շատրւաններից ձեր ուշադրութիւնը այդ վայրում գրաւում է «Քոպէսական մարդք» կոչւող շատրւանը. նա ուղիղ ամեն մի ըոպէն կամ 60 վայրկեանը մէկ անգամ տաք ջուր է վեր խփում 4-5 սաժէն և աւելի բարձրութեամբ: Այսպէս կանոնաւոր է կրկնւում այդ քանը, ինչպէս զինւորն է իր վարժութիւնները կատարում հրամանատարի պատւերով:

Յանկարծ, մօտում, մի ինչ որ տեղից լսում է խլացուցիշ սուլոց. կարծէք տամնեակ ներով շոգեկառքեր հաւաքւած լինեն այդտեղ.



Նկ. 4. Հեղեր

բոլորը միանդամից զիլ ձայն են արձակում։ Դուք նայում էք ձեր շուրջը և նկատում, թէ ինչպէս երկրի խորքից քուլայքուլայ գուլորշի է բարձրանում շատ վեր և այնտեղ սպիտակ, թեթև ամպ դառնում։ Դա կոչւում է «Գոլորշու նաւակ»։ մի անցք է դա, որից ջուր չէ բղիսում ամենսին, այլ շոգի է դուրս գալիս։ Ասում են, որ առաջ այդտեղ հսկայական հէյզեր է եղել։

Աւելի հեռուում դուք հանդիպում էք «Կախարդի որջ»-ին։ Այս փոքր փոսում ջուրը միշտ եռ է գալիս և կլկում։ Ամեն մի քայլափոխում գետնի տակից դուրս են գալիս ջուր և գոլորշու քուլաներ։ Մեծ զգուշութեամբ սլիտի քայլել կայծքարեայ երերուն գետնի վրայով, թէ չէ նա հեշտութեամբ կարող է նստել և հետաքրքիր ճանապարհորդի ոտքերը ուղիղ եռացող ջրի մէջ խրել կարող են։ Եւ կամ՝ բացւող ճեղքւածքից վեր կլսիէ եռացող ջուր ու այն համարձակ մարդուն լաւ տաք բազնիք ցոյց կտայ։

Բայց, չնայելով վտանգին, ճանապարհորդները իջնում են մինչև «Կախարդի որջ»-ի յատակը։ Սա ամբողջապէս ծածկւած է մեծ ու փոքր ձագարներով։ մի քանիսում ջուրն է եռում, ինչպէս կաթսայում, —անընդհատ, գիշեր ու ցերեկ։ միւսները մինչև բերանը լցւած են

մուգ-կարմրաւուն տիղմով, որոնցից երբեմն կայչուն ցեխ է դուրս խփում:

Բայց քայլենք առաջ: Մեր հանդէպ ահա տարածւեց մի եռացող լիճ: Հքնաղ, զարմանահրաշ է նա՝ շրջանաձև է, 30 պաժէն տրամագծով: Նրա մակերևոյթից վեր կախւած են սեպ, ժայռու ափերը: Ձեզ թւում է, թէ դա լիճ չէ, այլ հէքիաթներում յիշւող բազմագլխեան հրէշի լայն բացւած երախ (բերան): Այնտեղ յաւիտեան եռ է գալիս, կատաղի ծփում և պըճպնում սկ ջուրը: Մարդ սարսափում է այդ անգուշդի յատակը նայելիս: Լճից վեր տարածւում են շոգու թեթև ամպեր:

Դուք զմայլում էք այդ հիասքանչ տեսաւրանով: Բայց յանկարծ լսում էք խուլ մռնչոց. կարծէք գաղան լինի: Նայում էք հրէշի երախին. այնտեղից ջուրը արագ վեր է խփում չքնաղ սիւների ձեռվ և ապա կրկին նըստում: Ջուրջը կարծէք արծաթի փոշի է տարածւում: Մի քանի րոպէ ևս, այդ տարօրինակ երևոյթը էլլ կրկնւում է: Վերջապէս լուսում է ականջ խլացնող մռնչիւն: և ի՞նչ... ամբողջ լիւճը միանգամից վեր է բարձրանում և ջրի առագինսիւն գառնում: Դրանից գոյանում է եռացող ջրի մի հսկայական շատրւան 40 սաժէն բարձրութեամբ: Գետինը դողում, տատանուում է ոտքիդ տակ, ինչպէս եր-

կրաշարժի ժամանակ: Շոգու ամպեր են վեր ելնում դէպի ջինջ-կապոյտ երկինքը: Հէյզերի բերանից լսող մռնչիւնը, սուլոցը, ոռը բերանից, գղրդիւնը, — այդ բոլորը խառնուում են իրար նոցը, գղրդիւնը, — այդ բոլորը խառնուում են իրար հետ և առաջ բերում մի հրէշային, դժոխային հետ և առաջ բերում մի հրէշային, դժոխային առաջատութիւն: Եռացող ջրի հետ միասին առաջատութիւն: Եռացող ջրի հետ միասին առաջ բերում լիի բերանից և հագին քարեր են գուրս վեժում լիի բերանից և վեր թռչում թնդանօթի գնդակի պէս:

Բայց մի քանի րոպէ ևս, ջրեղէն հոյաւ կապ սիւնը սկսում է կամաց-կամաց իջնելք դժոխային աղմուկը մի փոքր հանդարտում է: Խլացնուցիչ որոտները այլ ևս առաջւանը չեն: ջուրն էլ կրկին այնպէս, ինչպէս բարձրացնել էր, անհետանում է հրէշի երախում: Ժայթքելը դադարնւմ է:

Նայեցէք դուք այժմ լիի յատակին. այնտեղ ջրի հետք անգամ չկայ: Երկնքի երեսին տառ բաժւած սպիտակ ամպերը, մէկ էլ լիի խորքից լսող խուլ, անորոշ մռնչիւնը միայն կյլշեցնեն ձեզ, որ ձեր աչքով տեսած հիասքանչ տեսաւրանը երազ չէ եղի...

Այդ հսկայական հէյզերի անունն է ՇԳԵՐ բաղանցը: Նա ամենամեծն է աշխարհի բոլոր հէյզերներից:

Դժւար է երկակայել աւելի գրաւիչ, աւելի կախարդիչ մի տեղ, քան Ամերիկայի և Ալգոային պարկուն է: Պակաս հոչակ չունեն նաև

հեռաւոր հիւսիսում՝ նալանդիա կղզու վրայ գտնուող հէյզերները:

Խոլանդիայի «Մեծ Հէյզերը»նման է սի ջրհորի՝  $I^{1/2}$  սաժէն լայնութեամբ և 6 սաժէն խորութեամբ։ Այս հէյզերում ջուրը եռ է գալիս և պղպջում՝ ինչպէս կաթսայի մէջ։ Երբեմն երբեմն տաք ջուրը շատրւանինման վեր է խփում 15 սաժէն բարձրութեամբ։ Զրի հետ երբեմն մի քանի փութ ծանրութիւն ունեցող քարի կտորներ են դուրս նետուում։

Մի քանի ըոսէ ջուրը այդպէս շատրւանի նման խփում է, ապա պակասում և վերջանում։ Բայց 30 ժամից յետոյ կրկին սկսում է նոյնը։ ապա նորից տիրում է հանդարտութիւն։ և այսպէս պարբերաբար կրկնում է այդ բանը։

\*\*

Ինչից է առաջ գալիս հէյզերը։

Երկրի ամենավերին շերտը կամ գետինը արեգակի ճառագայթներից տաքանում է, իսկ նրա տակ գտնուող մի քանի շերտեր սառն են։ այդ է պատճառը, որ այս վերջին շերտերում ծծւած և այստեղից բղնող աղբիւրների ջուրը սառն է լինում։

Հրաբուղիները և տաք աղբիւրները ցոյց են տալիս սակայն, որ երկրի խորքում տաքութիւն կայ։ Եւ իսկապէս, քանի ջուրը երկրի աւելիներսը ծծւի, այնքանէլ աւելի կտաքանայ.

Երկրի ներսի ջերմութիւնից Շատ տաքութիւնից ստորերկրեայ ջուրը եռ է գալիս, գոլորշի առաջացնում։ Իսկ գոլորշին, իմացանք արդէն, ոյժ է և չէ թողնում որ տաք ջուրը գետնի տակ մնայ։ այսպէս՝ ահա բղխում են տաք աղբիւրներ։

Կովկասում իսս կան տաք աղբիւրներ։ Օրինակ Թիֆլիսում, Պետիգորսկի, Ժելեզնօվոդսկի մօտերքը (Հիւս. Կովկաս ևն)։

Կան տաք աղբիւրներ, որոնցից բղնող ջուրը եռ է գալիս, գոլորշու սիւներ են առաջանում և շատրւանի նման խփում, բայց ոչ անընդհատ այլ երբեմն-երբեմն միայն։ գրանք կոչւում են հէյզերներ։

Իսկ ինչու հէյզերը անընդհատ չէ խփում։


Այդ հառկանալու համար այսպիսի փորձ արէք։ Վերցը էք մի նեղ խողովակ, որի մի ծայրը լաւ փակած լինի. լցը էք այդ խողովակը մինչև ծայրը ջրավ. աքցանով (քալփաթին) բռնած պահէք այդ խողովակը, ապա խողովակի յատակը սկսեցէք տաքացնել։ ձեր աչքի առջև իսկ որ հէյզեր կսկսի խփել։ նախ և առաջ՝ խողովակի յատակում առաջ կգայ պըղպջակ (փամփատիկ). նա կամաց-կամաց կմեծանայ, վեր կբարձրանայ և խողովակից դուրս կթափի մի քիչ ջուր։ Դրանից յետոյ առաջ կգայ երկրորդ պըղպջակը, որ առաջինից աւելի մեծ կլինի. դա էլ նոյնը կանի։ Վերջապէս՝ խողովակի յատակում

շատ գոլորշին կհաւաքւի: Գոլորշին արագ վեր  
կբարձրանայ և բոլոր ջուրը դուրս կթափւի  
շրջապատի առարկաները թաց անելով: Այդ գործ  
ծողութիւնը էլ աւելի արագ և ուժեղ կկատար-  
ւի, եթէ դուք խողովակի յատակի վրայ մի  
փոքր աւագ ածէք:

Նոյնն է նաև հեյզերը։ Ստորերկրեայ. ջուրը  
տաքանում է երկրի խորքի ջերմութիւնից  
(պլիսաւորապէս հրաբուղիների մօտ, ստորեր-  
կրեայ կրակարանից), եռում և երկրի ճեղ-  
քերից դուրս գալիս։ Տարբերութիւնը միայն  
այն է, որ մեր խողովակը, ջուրը դուրս  
խփելուց յետոյ, մնում է բոլորովին դատարկ. իսկ  
հեյզերի ջրանցքը մի առժամանակ յետոյ նորից  
լցում է երկրի մակերեսոյթից և ստորերկրեամ  
ճեղքերից ներս հոսող ջրով։ Այս նոր ջուրը ի  
հարկէ պառն է լինում. դրա համար էլ հեյզերը  
միառժամանակ չէ խփում. նոր հոսող ջուրը  
դեռ պիտի տաքանայ. և հենց որ նա տաքա-  
նում, եռ է գալիս, հեյզերը նորից սկսում է  
խփել։

Եթէ դուք վերցնէք մի քանի խողովակ, որոնց մի մասը հաստ, լայն և կարճ լինի, իսկ միւսները բարակ, նեղ և երկար, այդ գեղքում դուք կտեսնէք հետեւեալը. Չուրը նրանցից միակերպ չէ դուքս խփում, այլ կարճ և հաստ խողովակներից հանդարտ կերպով, իսկ

Նեղ և բարձր խողովակներից ուժգին, թափով:  
Բոլոր տաք աղբիւրների ջրանցքն (խողովակը)  
էլ միատեսակ չէ լինում, ուստի և նրանք միա-  
տեսակ չեն բղխում. — մի քանիաը (լայն և ցած  
խողովակ ունեցողները) ցածը, կամաց են խը-  
փում, իսկ ուրիշներն էլ չատ բարձր, ուժեղ,  
շադրւանի պէս:




## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Հրաբուղիս.—ըստ Պլինիոս Կրտսերի\*) և Ռուբակինի:
2. Պոմայէյի աւերակներում.—ըստ Ա. Ահարոնեանի:
3. Դէպի Վեգուվ. ըստ Ա. Ահարոնեանի:
4. Սոսկալի եկրաւարժներ.—ըստ Ռուբակինի, Խւանովի և Գորբունով-Պոսադովի:
5. Ինչի՞ց են առաջ գալիս հրաբուղիսը Եւ Երկրաւարժը.—ըստ Վագնէրի և Ռուբակինի:
6. Հէյզեր.—ըստ Նեչանի\*\*) և Ռուբակինի:

\*) Նիւթը վերցրած Խւանովի դասագրքից.

\*\*) Գորբունով-Պոսադովի աշխարհագրական ընթերցարանից:



Լոյս են տեսել իւ վաճառում են  
ԱՐՏԱՇԵՍ ԱԲԵՂԵԱՆԻ

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐՔԵՐԸ

(փոխադրած և կազմած ըստ իւանովի, Կրուբէրի  
և ուրիշ.)

1) մասն Ա.-4-րդ և մասամբ 3-րդ տարւայ  
դասընթաց:

Բնական աշխարհագրութիւն:—Կովկաս, Ռուս  
սաստան, Փոքր Ասիա և Հայաստան, Պարսկաս-  
տան. Հինգ աշխարհամասեր. յաւելւած՝ Աշխար-  
հագրական զրոյցներ. 2-րդ տպագրութիւն, բարե-  
փոխած և ճոխացրած.

(համաձայն հայոց դպր. ծրագրի) 107 նկարով

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

2) մասն Բ.-Ասիա, Աֆրիկա, Ամերիկա, Եւ  
Աստրալիա, բազմաթիւ նկարներով (5-րդ տար-  
ւայ դասընթաց.)

ԳԻՆԸ 65 ԿՈՊ.